

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/4

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 23.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303619/03 որոշման դեմ:

«Արաքս հրատարակչություն» ՍՊԸ-ի գանգատում բերված փաստարկները.

«Արաքս հրատարակչություն» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ սույն թվականի հոկտեմբերի 18-ին ծանուցվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված վարչական վարույթին մասնակցելու համար Մաշտոցի ՀՏ ներկայանալու վերաբերյալ: Գործի քննությանը չներկայանալու պատճառը հանդիսացել է հեռախոսային խոսակցության արդյունքում տեղի ունեցած թյուրընթացումը, որից հետո ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 23.10.2015 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303619/03 որոշումը: Նշված որոշմամբ «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ տնօրենը 2015 թ-ի օգոստոս ամսվա եկամտային հարկի հաշվարկը չներկայացնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ-ն համարվում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ և չի կրում եկամտային հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն, ընկերությունը խնդրում է առոչինչ ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 23.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303619/03 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 23.10.2015 թ-ի 1149 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ տնօրենը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի օգոստոս ամսվա եկամտային հարկի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 23.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303619/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ տնօրենի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն հանգամանքը, որ «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ-ն հանդիսանում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները յուրաքանչյուր հաշվետու տարվա համար մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած՝

1) հաշվետվություն՝ գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառության վերաբերյալ.

2) անձնավորված հաշվետվություն՝ սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված եկամուտների և դրանց մասով վճարված եկամտային հարկի վերաբերյալ»:

Վերոգրյալից հետևում է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները եկամտային հարկի ամսական հաշվարկներ ներկայացնելու պարտականություն չեն կրում: Այսինքն, «Արաքս հրատարակչություն» ՍՊԸ տնօրենը վարչական պատասխանատվության է ենթարկվել մի խախտման համար, որը նրա կողմից չի կատարվել:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելի չէ արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 23.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303619/03 որոշումը լիով գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

